թիւնը։ «Տղով կնկայ» և ծծկեր երեխաներ ունեցող մօրը գլխատել չի լինի (№ 16 Ա., § 14—22. Տես և № 17. Ա., § 41—44). ճիշտ նման Պարսից Կարնամակ վէպում Արտաւանի դստեր, Շապուհ Ա.-ի մօրը, պատահած անցքին[1]։ Պարսկական այս օրէնքը հաւանօրէն և հայկական է։ Պարսից մեծ վէպի Շահնամէի ազդեցութիւնը ևս մեծ է, մանաւանդ մեր Քաջանց տան վէպի վրայ. օրինակ «բազպանդը», որով Ռուստամը Զոհրապին ճանաչում է, կայ թէ Քաջանց և թէ Զոջանց տան վէպում (№ 11, Դաւիթ և Պզտիկ Մհեր, Ա., էջ 38)։ Այսպէս էլ Բաղդասարին դարան լարելով փշալից փոս քցելը (№ 16, Դ, § 103—108) յիշեցնում է Ռուստամի Զալի վախճանը։ Բ. Խալաթեանի, Գարեգին վարդապետի և Ս. Հայկունու հրատարակութիւններից երևում է, որ Շահնամէի դիւցազները դարձել են մեր Զոջանց տան դիւցազների ազգական և շատ անգամ արտասանում նոյն խօսքերը, երդումը կամ աղօթքը։ Շահնամէն և Կարնամակը յայտնի են եղել և հին հայերին այժմեան ընագրից սակաւ ինչ տարբեր բովանդակութեամբ, ինչպէս երևում է Մ. Խորենացու աւանդածից[2]։

Ոչ պակաս հետաքրքրական նորութիւն է Թուր Կէծակի, Քուռկու Զալալի, Թամք Սատաֆի և Գուրդն ի գորոզի[3] ծագումն ու գործածութիւնը (№ 16, Բ, § 27—30. 58—61. լաւագոյն ևս № 17, § 58—64) և անդրանիկ որդու Վարդանի աստղաբաշխ կոչումը, որ «աստղեր կը ճանչնէր»։ Մի այլ զրոյցում այսպէս է բացատրւում այս բառը. «Ես աստղաբաշ եմ, ես էլնեմ դուռ աստղերը իշկամ, նեղութենի էղիք կիմանամ ձեզի կը խասնեմ, իմ շնորքս էս ա»[4]. ուրեմն աստղաբաշիը աստղագէտի մտքով է, որ հնագոյն ժամանակներում, մանաւանդ միջին դարերում իմաստութեան հոմանիշ էր. Իկոնիոնի սուլթան Ալատինի մասին ասուած է «այր իմաստուն և աստղաբաշխ[5]»։ Այսպիսի յատկութիւն ունին այլ փոփոխակներում Զոջանց տան այլ դիւցազներն ևս Սանասար, Բաղդասար, Զէնով Յովան և այլն։ Զարմանալի է, որ մեր այս դէմ միամիտ դիւցազներին այսպիսի յատ-

---

1. Ց. Թիրաքեան. Արտաշիր Պապական Կարնամակ. ԺԳ. § 18—19. էջ 25. Պարիզ 1907.

2 Խորեն. Ա. «ի Պարսից առասպելից էջ 62—64 եւ «Առասպելք Պանլաւկայ» Բ. հ. էջ 150—151, Վենետիկ 1865.

3. Արդեօք «Գուրդն ի գորոզի»ն կապ չունի՞ զօրաւոր «Գորոզոյ խաչի» հետ (Վարդան պատմ. Հէ, էջ 152. Վենետիկ 1862. Զամչեան Դ. ԺԹ. էջ 150)։

4. Աղդաղ. Հանդէս XIX. «Զանգեզուր» էջ 124. Թիֆլիս 1910.

5. Սմբատ Կունդոտապլ. Տարեգիրք. էջ 119. Պարիզ 1859։